# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 15)**

4 դեկտեմբերի 2015թ.

ժամը՝ $15^{00}$

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին:
(Արմեն Գրիգորյան)

2. «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին:
(Ք. Արուսյակ Սաջոնյան)

3. «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին:
(Ք. Արուսյակ Սաջոնյան)

4. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրի մասին:
(Սամվել Հովսեփյան)

5. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին:
(Սամվել Հովսեփյան)

6. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին:
(Սամվել Հովսեփյան)

7. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին:
(Սամվել Հովսեփյան)

8. «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրրան-Վանաձոր՝ «Կրթական-փործարարական այգու ստեղծում» ծրագրի մասին:
(Արմինե Հովհաննիսյան)

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբեր-կուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբեր-կուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամա-շնորհային ծրագրի մասին:
(Արմեն Հայրապետյան)



**10. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Արման Բարխուդարյան)

10.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-թյունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.2 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդու-թյունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **N 2:**

10.3 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.4 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.5 Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարանի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.6 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին

10.7 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **N 3:**

10.8 «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.9 ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի հասցեով բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.10 «Սյունյաց նախադպրոցականներ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռների ներմուծման ծրագրի մասին:

10.11 «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու-թյան հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.12 «Քաշյան Ա.Ռ.Մ. կենտրոն» զարգացման հասարակական կազմակերպության հաս-ցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

10.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-134-Ա որոշմամբ հաս-տատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Դիակոնիա» բարե-գործական հիմնադրամ):

10.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):

10.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ):

10.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 14-ի N Մ-246-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միություն):

10.17 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

10.18 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-912-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծան մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն):

## 11. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Արման Բարխուդարյան)

11.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

11.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1253-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

11.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

11.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-1167-Ա որոշմամբ



հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

11.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ):

11.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):

11.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1296-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն):

11.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

11.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի N Մ-110-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ):

## 12. Այլ հարցեր

12.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-989-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

12.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-277-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

12.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1189-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

12.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1225-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»):

12.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 17-ի N Մ-416-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին [illegible]

***ՆԱԽԱԳԻԾ***

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**դեկտեմբերի 2015 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա» ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 07/80-2/-15 և դեկտեմբերի -ի N 06/3-3/-15 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 02/14/-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 21,972,000 դրամ արժողությամբ «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռայվերտի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի հուլիսի 15-ին կնքված՝ N 05Գ/015 (2015 թվականի հոկտեմբերի 14-ի կնքված համաձայնագիր թիվ 1 և 2015 թվականի հոկտեմբերի 10-ի կնքված համաձայնագիր թիվ 2) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեխանիկական մեխանիզմով վարագույրների ձեռքբերում՝ 21,972,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս [illegible]
«24» նոյեմբեր 2015 թ.

## «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնը ապահովել վարագույրներով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 21,972,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 նոյեմբեր 2015թ. – 27 ապրիլ 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնը ապահովել վարագույրներով՝ 21,972,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Ռայվերտի»ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Տ. Մեծի 69, շին. 27, ՀՎՀՀ 00801721)՝ պայմանագիր կնքված 15.07.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 15 նոյեմբեր 2015թ. – 27 ապրիլ 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնը ապահովել վարագույրներով՝ 21,972,000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր. 15/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

01.12.2015թ. № 07/30-2/37553-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.11.2015թ. N 15/15.9/20119-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Բաղդոյան
Հեռ. 011 910 435

034/37546-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան 1
Հեռ. 011 800077

06/3-3/37224-15
27.11.2015թ.
մր. 15/1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.11.2015թ. թիվ 15/15.9/20119-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

Ա-15/1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

26.11.2015թ. N 02/14/14665-15

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի 15/15.9/20119-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37160-15

---

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա

Ա 15/2

քաղ. Երևան

## «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և դեկտեմբերի -ի 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 02/14/ -15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N / -15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N ԱՄ/22.2/ -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ2-1/ -15 և Շիրակի մարզպետարանի 2015 թվականի դեկտեմբերի -ի N -01/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 573,000,000 դրամ արժեքով «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, ք. Գյումրի, Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Գյումրու ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N 023040611550 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 33,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N 133123 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 10,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2005 թվականի մարտի 31-ին կնքված՝ N 410016812/758 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 4,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 18-ին կնքված N 402654358 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և

դր. 15/2

ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

դր. 15/2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Ջաննեթ (քույր Արուսյակ)
Սարգսյանի կողմից

LADY OF ARMENIA CONVENT

նոյեմբեր 2015թ

2016-2018 ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | 1. Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Պողոսյան կրթահամալիրում անվճար պահել և դաստիարակել 6-20 և ավելի բարձր տարիքի միակողմանի և երկկողմանի որբ մոտ 60 երեխաների ու պատանիների Հայաստանի բոլոր մարզերից, անկախ նրանց կրոնական պատկանելիությունից: Երեխաները հաճախում են պետական դպրոցներ, ապա վերադառնում են կրթահամալիր:<br>2. Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Ծերերի ցերեկային խնամքի կենտրոնում աջակցել աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում անհատույց բաշխման նպատակով բեռների ներմուծման (տղամարդու, կանացի, և երեխայի հագուստ, անկողնային, հիգիենիկ և դպրոցական պարագաներ և այլն), ինչպես նաև էլեկտրական էներգիայի, գազի, ջրամատակարարման և ջրահեռացման, սննդի, տնտեսական ապրանքների, գրենական պիտույքների, ինչպես նաև շենքի և տարածքի վերանորոգման համար օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում են.<br>Պողոսյան հիմնադրամ – տարեկան մոտ 28՛500՛000 դրամ<br>Վահե Դոմպալաքյան – տարեկան մոտ 15՛000՛000 դրամ<br>Ռեյմոն Կույումջյան - տարեկան մոտ 11՛400՛000 դրամ<br>«Ֆամիլիյա Ինսիեմ» ԲԿ - տարեկան մոտ 3՛500՛000 հազար դրամ<br>Եվրո Դ-Օրիան ԲԿ – տարեկան մոտ 5՛220՛000 դրամ<br>«Քնեվա» ԲԿ – տարեկան մոտ 10՛700՛000 դրամ<br>«Ռենովաբիս» ԲԿ – տարեկան մոտ 10՛000՛000 դրամ<br>«Ասոսասիոն Ալյանս Արմենիեն» ԲԿ-տարեկան մոտ 8՛700՛000 դրամ<br>Միսիոն Անֆանս ԲԿ - տարեկան մոտ 2՛600՛000 դրամ<br>ՍՈԱՌ ԲԿ – տարեկան մոտ 20՛000՛000 դրամ<br>Միշել Դավույան – տարեկան մոտ 3՛000՛000 դրամ<br>Սաջոնյան քույրեր – տարեկան մոտ 4՛800՛000 դրամ<br>Հրայր Հովնանյան – տարեկան մոտ 10՛000՛000 դրամ<br>Ռաֆֆի Արթինյան – տարեկան մոտ 5՛000՛000 դրամ<br>Մարլին Երևանյան – տարեկան մոտ 15 միլիոն դրամ<br>Աննա Գազանչյան – տարեկան մոտ 16 միլիոն դրամ<br>Րաֆֆի Բալյան– տարեկան մոտ 10 միլիոն դրամ<br>Նոթր Արմենի կազմակերպություն– տարեկան մոտ 6 միլիոն դրամ<br>Կյուլեսերյան հիմնադրամ– տարեկան մոտ 5 միլիոն 580 հազար դրամ<br>Ընդամենը՝ 191՛000՛000 դրամ և 573՛000՛000 դրամ 3 տարվա համար: |

Հր. 15/2

| | | |
|---|---|---|
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը *(հասցե՝ Գյումրի, Ե.Չարենցի 6; ՀՎՀՀ 05513266)*: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը: Ծրագրի ուղղվածությունը կրթական, սոցիալական և առողջապահական է: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի արժեքն է 1 տարվա կտրվածքով՝ մոտ 191'000'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար՝ մոտ 573'000'000 դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են.<br>➢ Տիրամայր Հայաստանի Կուսաստանի «Պողոսյան կրթահամալիր» հաճախող 6-20-ից բարձր տարիքի մոտ 60 երեխաներ ու պատանիներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող ընտանիքներում, կամ միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ են:<br>➢ Տիրամայր Հայաստանի Կուսաստանի «Ծերերի ցերեկային խնամքի» կենտրոնը հաճախող մոտ 50 միայնակ ծերեր:<br>➢ Հայաստանի բոլոր մարզերի, անապահով ընտանիքները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագրերի մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա:<br>Ընդհանուր առմամբ, ծրագրի շահառուներն են հանդիսանում 1000-ից ավելի ընտանիքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2001 թվականից, այժմ դրակավորման է ներկայացնում 2016-2018 թվականներին իրականացվելիք ծրագիրը; |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | • Շենքի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր – տարեկան մոտ 37'000'000 դրամ և մոտ 111'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Կենտրոն հաճախող երեխաներին վիտամիններով և հանքային նյութերով հարուստ տաք սննդի մատուցում օրը 3 անգամ: Մեկ երեխայի սննդի օրական արժեքը կազմում է մոտ 1'000 դրամ: Տարեկան սննդի ծախսը կազմում է մոտ 20'000'000 դրամ և մոտ 60'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Դպրոցահասակ երեխաների դպրոցական տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո: Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի պայուսակների ապահովում: Մեկ երեխայի հաշվով գրենական պիտույքների արժեքը ամսական կազմում է մոտ 1600-2000 դրամ: Տարեկան գրենական պիտույքների և ծախսը կազմում է մոտ 1'300'000 դրամ և մոտ 3'900'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Երեխաների բնականոն կենցաղի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական պարագաներ - տարեկան մոտ 1'700'000 դրամ և մոտ 5'100'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Կենտրոնի գործունեության, ինչպես նաև՝ անապահով ընտանիքներին բաժանելու համար բարեգործական բեռների ներմուծում-տարեկան մոտ 128'000'000 դրամ և մոտ 384'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Ծրագրային և ֆինանսական աուդիտի իրականացման ծախսեր-տարեկան մոտ 3'000'000 դրամ և մոտ 9'000'000 դրամ 3 տարվա՝ |

Հր. 15/2

| | | |
|---|---|---|
| | | 2016-2018թթ. համար:<br>• Բժշկական ծառայություններ/ ակնաբույժի, ատամնաբույժի/ բժշկական վերահսկողություն<br>• հոգեբանական ծառայություններ՝ հոգեբանական աջակցության կազմակերպում, անհատական և խմբային թերապիաներ:<br>• Սոցիալական ծառայություններ<br>• Պատմա-մշակութային արժեքների հետ շփում, ամիսը 1 անգամ սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում; |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրի շրջանակներում ծախսվում է՝<br>-մոտ 3'500'000 դրամ էլեկտրականության համար կամ 10'500'000 դրամ և 3 տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'000'000 դրամ ջրամատակարարման և ջրահեռացման համար և 3'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'500'000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 4'500'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 11'000'000 դրամ գազի համար և 33'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 20'000'000 դրամ շենքերի և տարածքի վերանորոգման համար և 60'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 20'000'000 դրամ սննդի համար (մնացած սնունդը ուղարկում են բարերարները) և 60'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'300'000 դրամ գրենական պիտույքների համար (մնացած անհրաժեշտ գրենական պիտույքները ուղարկում են բարերարները) և 3'300'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'700'000 դրամ տնտեսական ապրանքների և գրենական պիտույքների համար (մնացած անհրաժեշտ տնտեսական ապրանքները ուղարկում են բարերարները) և 5'100'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 128'000'000 դրամ բարեգործական բեռների ներմուծման համար և 384'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 3'000'000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 9'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային* |

մ․ 15/2

| | | |
|---|---|---|
| | | *արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)* |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | -մոտ 1'500'000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 4'500'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար: -մոտ 3'000'000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 9'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման կապակցությամբ: Ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մ․ 15/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

2.12.15 № 04/80-21

Ձեր № 37890-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.11.2015թ. N 15/15.1/20267-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Տիրամայր Հայաստանի Կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- որոշման նախագծում նշված են թվով 4 գործարքներ, իսկ կից ներկայացված փաստաթղթերով ներկայացվել է 3 գործարք (բացակայում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Կոտայքի ԳԳՄ-ի հետ կնքված պայմանագիրը)

- ծրագրի 11-րդ կետով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն, սակայն ակնհայտ է, որ ծրագրի 10-րդ կետի 5-րդ և 9-րդ ենթակետերում նշված գործարքները պետք է ընդգրկված լինեն նաև 11-րդ կետում:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդյան
Հեռ. 011 910 435

034/37798-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/38049-15
2.12.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ա-15/2

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 27.11.2015թ. N15/15.1/20265-15 գրությանը կից ներկայացված «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

1.Հաշվի առնելով ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» №66-Ն որոշման հավելված 2-ի 5-րդ կետի պահանջները, որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի 3-րդ կետում «այլ կազմակերպությունների» փոխարեն անհրաժեշտ է նշել բարեգործ կազմակերպությունների կամ անհատների անունները և դրանց կողմից ակնկալվող դրամական միջոցները:

2. Որոշման նախագծին կցված չէ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Գյումրու ԳԳՄ-ի հետ կնքված գործարքը հիմնավորող պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում եմ ծրագիրը լրամշակելուց հետո միայն ներկայացնել բարեգործական որակման:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

034/37907-15

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

Ա-15/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

30.11.15 N 02/14/14781-15

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի 15/15.1/20265-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37575-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ա.15/2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

30.11.15 N ԱՄ/22.2/13815-15

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 15/15.1/20265-15 գրության կապակցությամբ՝ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

020/37493-15

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

ա.15/2

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/14329-15 30.11.2015

*ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի նոյեմբերի 27-ի № 15/15.1/20265-15 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ?????? ???????
Nov 30 2015 5:45 PM +04:00

Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

031/37570-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

դր.15/2

« 01 » 12 2015 թ.                N ՖԿ/ԵՀԱՄ-2-1/

Ձեր 2015-11-27, 15/15.1/20265-15                10731-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««Տիրամայր Հայաստանի Կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ առաջարկում եմ ծրագրի 13-րդ կետից հանել «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը, քանի որ նախարարությունը ծրագրի շրջանակներում համագործակցում է կազմակերպության հետ, սակայն վերահսկողություն չի իրականացնում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝                Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/37722-15

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3   հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am   info@mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 30 >> 11 2015թ.
N: 01/6043-15

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

դր.15/2

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ձեր՝ 27.11.2015թ.*
*թիվ՝ 15/15.1/20265-15*

Հարգելի ~~պարոն Տեր-Սիմոնյան~~

Մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» որոշման նախագիծը :

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝                Ֆ.ՑՈՒԼԱԿՅԱՆ

կատ Հ.Արշակյան
/0312 3-16-26/

116/37578-15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն ապահով ծերություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն 2.12.15, N 07/80-2/37890-15 | |
| 1. Որոշման նախագծում նշված են թվով 4 գործարքներ, իսկ կից ներկայացված փաստաթղթերով ներկայացվել է 3 գործարք (բացակայում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Կոտայքի ԳԳՄ-ի հետ կնքված պայմանագիրը)<br>2. Ծրագրի 11-րդ կետով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն, սակայն ակնհայտ է, որ ծրագրի 10-րդ կետի 5-րդ և 9-րդ ենթակետերում նշված գործարքները պետք է ընդգրկված լինեն նաև 11-րդ կետում | 1. Պայմանագիրը լրացուցիչ ուղարկվել է<br>2. Առաջարկությունը ընդունվել է, կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |
| ՀՀ ֆինանսների նախարարություն 2.12.15, N 06/3-3/38049-15 | |
| 1.Հաշվի առնելով ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» №66-Ն որոշման հավելված 2-ի 5-րդ կետի պահանջները, որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի 3-րդ կետում «այլ կազմակերպությունների» փոխարեն անհրաժեշտ է նշել բարեգործ կազմակերպությունների կամ անհատների անունները և դրանց կողմից ակնկալվող դրամական միջոցները:<br>2. Որոշման նախագծին կցված չէ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Գյումրու ԳԳՄ-ի հետ կնքված գործարքը հիմնավորող պայմանագիր | 1. Առաջարկությունը ընդունվել է, կցված է ծրագրի լրամշակված տարբերակը<br>2. Պայմանագիրը լրացուցիչ ուղարկվել է |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 1.12.15, N ՖԲ/ԱնՄ-2-1/10731-15 | |
| Առաջարկում եմ ծրագրի 13-րդ կետից հանել «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բառերը, քանի որ նախարարությունը ծրագրի շրջանակներում համագործակցում է կազմակերպության հետ, սակայն վերահսկողություն չի իրականացնում | Առաջարկությունը ընդունվել է, կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

Ա-15/2



ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

Ա-15/3

# «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ » ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և դեկտեմբերի -ի 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 02/14/ -15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N / -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ2-1/ -15 և Շիրակի մարզպետարանի 2015 թվականի դեկտեմբերի -ի N -01/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 506.100.000 դրամ արժեքով «Ամառային ճամբար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, ք. Գյումրի, Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Կոտայքի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2010 թվականի հունիսի 23-ին կնքված N 05106109083 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 15,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հուլիսի 24-ին կնքված N 675001161928 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 7,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հունվարի 10-ին կնքված՝ N 540-541 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի,

Ա․15/3

ինտերնետի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Ծաղկաձոր» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2015 թվականի հուլիսի 4-ին կնքված N 369098802 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ա․15/3

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
Անարատ Հղության ՀԶ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Ջաններ (քույր Արուսյակ)
Մաջոնյանի կողմից

........ նոյեմբեր 2015թ

## 2016-2018 ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Ծաղկաձորի ամառային ճամբարում 4 հերթով հանգստանում, կրթվում և դաստիարակվում են անապահով ընտանիքների մոտ 1000 երեխաներ՝ Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաև՝ վրացահայ գյուղերից: Ակտիվ հանգստի հետ միասին երեխաները ուսանում են կրոնի պատմություն, երգ, պար, օտար լեզուներ, նկարչություն, ձեռագործ և այլն, ինչպես նաև մասնակցում են թատերականացված ներկայացումների, զվարճալի ու ինտելեկտուալ խաղերի, սպորտլանդիաների: Կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի Սևան, Հաղարծին, Մատենադարան և այլուր: Ճամբարի ընթացքում երեխաներին անվճար բաժանվում են հագուստներ և կոշիկներ, գրենական պիտույքներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը հիմնականում ֆինանսավորում են.<br>Ջինիշյան Հիշատակի հիմնադրամը – տարեկան մոտ 4'800'000 դրամ<br>Ռենովարիս ԲԿ – տարեկան մոտ 9'000'000 դրամ<br>«Փոնդասիոն Այյանս Արմենիեն» ԲԿ - տարեկան մոտ 6'500'000 դրամ<br>Եուրո Դ'Օրիան ԲԿ – տարեկան մոտ 6'700'000 դրամ<br>Միսիոնուերք ԲԿ – տարեկան մոտ 8'500'000 դրամ<br>ՔՆԵՎԱ ԲԿ – տարեկան մոտ 10'900'000 դրամ<br>«Ասոսասիոն Այյանս Արմենիեն» ԲԿ- տարեկան մոտ 12'400'000 դրամ<br>ՄՕԱՌ ԲԿ- տարեկան մոտ 3'300'000 դրամ<br>Մարլին Երևանյան տարեկան մոտ 6'700'000 դրամ<br>Հրայր և Աննա Հովնանյան հիմնադրամ – տարեկան մոտ 7'500'000 դրամ<br>Կիրխ ին Նոթ ԲԿ- տարեկան մոտ 7'500'000 դրամ<br>Կյուլեմերյան հիմնադրամ - տարեկան մոտ 25'000'000 դրամ<br>Փիթեր Ռսպիկյան տարեկան մոտ 12'000'000 դրամ<br>Նոթր Արմենի կազմակերպություն տարեկան մոտ 15'000'000 դրամ<br>Րաֆֆի Արթինյան տարեկան մոտ 5'900'000 դրամ<br>Հայր Թովմաս Դիրադուրեան - տարեկան մոտ 7'500'000 դրամ<br>Ֆերիդ Թեջիմեր - տարեկան մոտ 7'500'000 դրամ<br>Եղբայր Լեո - տարեկան մոտ 7'000'000 դրամ<br>Գրիգոր Արոյան - տարեկան մոտ 5'000'000 դրամ<br>Ընդամենը՝ 168'700'000 դրամ 1 տարվա համար և 506'100'000 դրամ 3 տարվա համար: |

| | | |
|---|---|---|
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը *(հասցե՝ Գյումրի, Ե.Չարենցի 6; ՀՎՀՀ 05513266).* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» ճամբարում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | • ճամբարին նախորդող մարտ-մայիս ամիսների և հաջորդող՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ, որի ժամանակ կատարվում են վերանորոգումներ և վերակահավորումներ - այս ընթացքում ծախսվում է մոտ 60’000’000 դրամ տարեկան և 180’000’000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար;<br>• բուն ճամբարի իրականացման փուլ հունիս –օգոստոս ամիսների ընթացքում - այս ընթացքում ծախսվում է մոտ 108’700’000 դրամ մեկ տարվա համար և մոտ 326’100’000 դրամ երեք տարվա համար:<br><u>Ընդամենը՝ 168’700’000 դրամ մեկ տարվա և 506’100’000 դրամ՝ 3 տարվա՝ 2016-2018 թթ. համար:</u> |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի Շիրակի և Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի և Արմավիրի մարզերի, Երևանի, ինչպես նաև Վրաստանի Նինոծմինդայի շրջանի հայաբնակ գյուղերի անապահով ընտանիքների 6-ից 16 տարեկան մոտ 1000 երեխաներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է, այժմ որակավորման է ներկայացնում 2016-2018 թվականներին իրականացվելիք ծրագիրը; |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ մարտ-մայիս և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներ -ճամբարի շենքի վերանորոգումներ, որի արժեքը կազմում է տարեկան միջինը 60’000’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 180’000’000 դրամ;<br>➢ ճամբարի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր - տարեկան մոտ 9’500’000 դրամ, երեք տարվա՝ 2015-2018թթ. համար մոտ 28’500’000 դրամ;<br>➢ ճամբարի իրականացման համար անհրաժեշտ սննդի, տնտեսական պարագաների, գրենական պիտույքների և այլ ծախսեր - տարեկան մոտ 38’000’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 114’000’000 դրամ;<br>➢ ճամբարի գործունեության, ինչպես նաև՝ ճամբարականներին բաժանելու համար բարեգործական բեռների ներմուծում- տարեկան մոտ 60’000’000 դրամ և մոտ 180’000’000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>➢ ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան մոտ 1’200’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3’600’000 դրամ; |
| 10 | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ ճամբարի շենքը կառուցված է անցյալ դարի 60-ական թվականներին և կարիք ունի անընդհատ վերանորոգումների: տարեկան վերանորոգումների արժեքը կազմում է միջինը 60’000’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 180’000’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր *ժամանակահատվածի համար);*<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 5’000’000 դրամի գազ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 15’000’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*);*<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 2’500’000 դրամի էլեկտրաէներգիա, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար՝ մոտ 7’500’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*);*<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 1’000’000 դրամի ջուր, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3’000’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*);*<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 1’000’000 դրամ՝ հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3’000’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*);*<br>➢ տարեկան ծախսվում են մոտ 3’000’000 դրամի տնտեսական ապրանքներ և պարագաներ, ինչես նաև գրենական պիտույքներ (մնացածը ուղարկում են բարերարները), երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 9’000’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*);*<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 35’000’000 դրամի սննդամթերք, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 105’000’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*);*<br>➢ մոտ 60’000’000 դրամ բարեգործական բեռների ներմուծման համար և 180’000’000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>➢ ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան մոտ 1’200’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3’600’000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար):* |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | - հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար - տարեկան մոտ 1’000’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3’000’000 դրամ;<br>-ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան մոտ 1’200’000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3’600’000 դրամ; |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև՝ Գյումրու և Ծաղկաձորի քաղաքապետարանների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան 1
Հեռ. 011 800077

01/3-3/37623-15
1.12.15
21.15/3

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 27.11.2015թ. թիվ 15/15.1/20267-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Տիրամայր Հայաստանի կուսանաց» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում հայտնում եմ.

1. Ներկայացված ծրագրի 3-րդ և 6-րդ կետերի համաձայն ծրագրի բյուջեն 3 տարվա համար կազմում է 506.100.000 դրամ, այնինչ որոշման նախագծի 1-ին կետում նշված է միայն 1 տարվա բյուջեի մասին (168.700.000 դրամ): Հաշվի առնելով վերոնշյալ անհամապատասխանությունը առաջարկում եմ կատարել համապատասխան հստակեցում:

2. Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրով նախատեսված է գազի մատակարարում 01.01.2013թ.-31.12.2015թ. ժամանակահատվածի համար, մինչդեռ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2016-2018 թվականների ընթացքում: Վերոնշյալի հետ կապված հայտնում եմ, որ տվյալ գործարքը չի բխում ծրագրից, միաժամանակ՝ արդեն իսկ մատուցված ծառայությունների գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:

Բացի այդ, վերոնշյալ գործարքը հիմնավորող պայմանագիրը կից ներկայացված չէ:

3. ՀՀ կառավարության 16.01.2003թ. «Բարեգործական ծրագրերի մասին» №66-Ն որոշմամբ հաստատված հավելված №2-ի 5-րդ կետի՝ «Հարկային

034/37585-15

21.15/3

արտոնությունների ստացման նկատառումով բարեգործական կարող են որակվել միայն այն ծրագրերը, որոնք իրականացվում են օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական (ներառյալ բարեգործական), կրոնական ու նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից և նրանց ֆինանսական կամ այլ միջոցների հաշվին»: Քանի որ ներկայացված ծրագրով նախատեսվում է օգտվել հարկային արտոնություններից, ապա ծրագրի 3-րդ կետում «այլ կազմակերպություններ» նշումը գտնում եմ անընդունելի, և առաջարկում եմ վերոնշյալ կետում կոնկրետ նշել բարեգործ համարվող կազմակերպություններին: Միաժամանակ, առաջարկում եմ նշել բարեգործ համարվող յուրաքանչյուր կազմակերպության կողմից հատկացվող աջակցության չափը:

Մինչ բարձրացված հարցերի հստակեցումը, ծրագրի բարեգործական որակումը գտնում եմ ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

ար. 15/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**
**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

30.11.15 N 02/14/14782-15

Ձեր N ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի 15/15.1/20267-15 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37516 - 15

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

ար. 15/3

«30» 11 2015 թ.    N ՖՊ/ԵՔԱՄ-2-1/10649-15

Ձեր 2015-11-27, 15/15.1/20267-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Տիրամայր Հայաստանի Կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝    Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/37494-15

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

դr 15/3

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: mienscedu.am www.edu...

N 03/07-1/14347-15 1.12. 2015

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի նոյեմբերի 27-ի № 15/15.1/20267-15 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

?????? ????????
Nov 30 2015 5:46 PM +04:00

Մ.ՄԿՐՏՉՅԱՆ

կատ. Ն.Սահակյան
հեռ. 524777

031/37587-15

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

դr. 15/3

«30» 11 2015թ.
N: 01/6046-15

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ձեր՝ 27.11.2015թ.*
*թիվ՝ 15/15.1/20267-15*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագիծը :

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

կատ Հ.Արշակյան
/0312 3-16-26/

116/37511-15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն 3.12.15, N 07/80-2/37890-15 | |
| 1. Բացակայում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հետ կնքված պայմանագիրը<br>2. Ծրագրի 11-րդ կետով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն, սակայն ակնհայտ է, որ ծրագրի 10-րդ կետի 5-րդ և 9-րդ ենթակետերում նշված գործարքները պետք է ընդգրկված լինեն նաև 11-րդ կետում | 1. Պայմանագիրը լրացուցիչ ուղարկվել է<br>2. Առաջարկությունը ընդունվել է, կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |
| ՀՀ ֆինանսների նախարարություն 1.12.15, N 06/3-3/37623-15 | |
| 2. Առաջարկում եմ կատարել համապատասխան հստակեցում բյուջեի մասով<br>3. Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրով նախատեսված է գազի մատակարարում 01.01.2013թ.-31.12.2015թ. ժամանակահատվածի համար, մինչդեռ ծրագիրը նախատեսված է իրականացնել 2016-2018 թվականների ընթացքում: Վերոնշյալի հետ կապված հայտնում եմ, որ տվյալ գործարքը չի բխում ծրագրից, միաժամանակ՝ արդեն իսկ մատուցված ծառայությունների գծով հարկային արտոնություններ չեն կարող տրամադրվել:<br>Բացի այդ, վերոնշյալ գործարքը հիմնավորող պայմանագիրը կից ներկայացված չէ:<br>4. Անհրաժեշտ է նշել բարեգործ կազմակերպությունների կամ անհատների անունները և դրանց կողմից ակնկալվող դրամական միջոցները | 1. Առաջարկությունը ընդունվել է, կցված է նախագծի լրամշակված տարբերակը<br>2. Գազի մատակարարումը նախատեսված է 01.01.2015թ.-31.12.2018թ ժամանակահատվածի համար<br>Պայմանագիրը լրացուցիչ ուղարկվել է<br>3. Առաջարկությունը ընդունվել է, կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

ա․15/3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
հոկտեմբերի 2015 թվականի N Մ - -Ա ա․15/4
քաղ. Երևան

## «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱ-ՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և հոկտեմբերի -ի N 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 02/ -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱեՍ-4-1/ -15 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի -ի N 001/14.2/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական ոլորտ ճանաչել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 113,413,776 դրամ ընդհանուր արժողությամբ «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայա…

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ…
հոգաբարձուների խորհրդի կողմի…
«30» նոյեմբերի 2015թ

«Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 1. ապահովել «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի սաների և հարակից համայնքների նախադպրոցական տարիքի թվով 120 երեխաների դաստիարակությունը և ընդհանուր զարգացումը;<br>2. ստեղծել զարգացնող միջավայր, որը կնպաստի նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվ կյանքին և ստեղծագործական զարգացմանը ;<br>3. ապահովել «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի սաների ինտեգրացիան հասակակիցների միջավայրում;<br>4. նպաստել նախադպրոցական տարիքի երեխաների կարողությունների, հմտությունների ունակությունների զարգացմանը և ինքնուրույնության ձևավորմանը;<br>5. նպաստել ծնողների հոգեբանամանկավարժական և երեխաների իրավունքների մասին գիտելիքների ձեռքբերմանը և հարստացմանը;<br>Այս կենտրոնում համաժամանակյա գործում են 5 խմբակներ՝ յուրաքանչյուրում 20-25 երեխա: Ընդ որում՝ վերը նշված 120 երեխաներից առավելագույնը սոսկ 15 երեխաներն են հանդիսանում մեր կազմակերպության սաները, իսկ մնացյալ 105 երեխաները հարակից 4 համայնքների՝ Կոտայք, Նոր-Գյուղ, Արամուս և Ակունք գյուղերի երեխաներն են, քանի որ մեր կենտրոնը նախադպրոցական տարիքի երեխաների համար գործող միակ հաստատությունն է այդ տարածքում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսված արտոնություններից: |



| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Կոտայքի Մարզ, գ. Կոտայք, Հերման-Գմայների փողոց 1<br>«Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման կենտրոնն» իր համապատասխան շինությամբ գտնվում է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 6 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Եթե ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղում բնակվող դպրոցական տարիքի երեխաները հաճախում են մանկական գյուղին հարակից Կոտայք և Նոր-Գյուղ համայնքների միջնակարգ դպրոցները, ապա նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության համար գործում է այս կենտրոնը, որն իր շենքային պայմաններով, ձևավորմամբ և կահավորմամբ սպասարկում է 120 երեխաների:<br>Ծրագիրն առնչվում է սոցիալական, հոգեբանական և կրթական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Տարեկան կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 37 804 592 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>2016-2018 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 113 413 776 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և մանկական գյուղին հարակից (Կոտայք, Նոր Գյուղ, Արամուս, Ակունք) համայնքների 3-5 տարեկան 120 երեխաներ և նրանց ծնողները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 931 900 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Իրավաբանական և հոգեբանամանկավարժական աջակցություն ծնողներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 050 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>3. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 411 995 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>4. գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր |

| | |
|---|---|
| | տարվա համար կազմում է մոտ 1 193 500 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության;<br>5. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 26 416 690 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>5.1 մանկապարտեզի դաստիարակներ՝ 21 300 034 ՀՀ դրամ;թվով՝ 6<br>5.2 մանկապարտեզի դայակներ՝ 5 116 656 ՀՀ դրամ; թվով՝ 3<br>Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>6. Հեռահաղորդակցություն, ինտերնետ `յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 168 000 ՀՀ դրամ;<br>7. Կազմակերպական ծախսերը յուրաքնչյուր տարվա համար կազմում են մոտ 3 632 507 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 931 900 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1 կրթա-դաստիարակչական պրոցեսի կազմակերպման համար սնունդ և լվացող նյութեր յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 876 500 ՀՀ դրամ<br>1.2 գրենական պիտույքներ, խաղալիքներ և խաղեր երեխաների համար, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 500 000 ՀՀ դրամ<br>1.3 նախասիրությունների խմբակներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 355 400 ՀՀ դրամ<br>1.4 համերգներ, տոն-զվարճություններ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 200 000 ՀՀ դրամ<br>2. Իրավաբանական և հոգեբանամանկավարժական աջակցություն ծնողներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 050 000 ՀՀ դրամ,<br>3. Կոմունալ ծառայություններ ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 411 995 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1 ջրամատակարարման վարձավճար՝ 40 000 ՀՀ դրամ;<br>3.2 էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 881 995 ՀՀ դրամ;<br>3.3 գազամատակարարման վարձավճար՝ 1 490 000 ՀՀ դրամ;<br>4. Ինչպես կազմակերպության մյուս ծրագրերն ու դրանց իրականացման համար նախատեսված շինություններն ու դրանցում գտնող գույքը ձեռք են բերված կազմակերպության միջոցներով և հանդիսանում են կազմակերպության սեփականությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս կենտրոն օրեկան միջինը 120 երեխաներ են հաճախում, ինչպես կենտրոնի շինությունը, այնպես էլ դրանում գտնվող գույքը համապատասխանաբար ենթարկվում են մաշվածության՝ կազմակերպությունը յուրաքանչյուր տարի որոշակի գումար է առանձնացնում |

4/15/4



| | |
|---|---|
| | կահույքի՝ պահարաններ, գրասեղաններ, սեղաններ և աթոռներ, խոհանոցային և փափուկ կահույք, ինչպես նաև էլեկտրական և այլ սարքավորումների՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազօջախներ, վառարաններ, ջեռուցիչներ, փոշեկուլներ, արդուկներ և այլն վերանորոգման կամ մասնակի փոխարինման համար:<br>Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 193 500 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1 տարածքի և շինությունների (մանկապարտեզի շենքեր, ռոդգման, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում և արդիականացում՝ 402 500 ՀՀ դրամ;<br>4.2 կահույքի, սարքավորումների ձեռք բերում և վերանորոգում՝ 791 000 ՀՀ դրամ;<br>5. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 150 000 ՀՀ դրամ;<br>6. Հեռահաղորդակցություն, ինտերնետ ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 168 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>6.1. հեռախոսի վարձավճար 60 000 ՀՀ դրամ;<br>6.2. ինտերնետի վարձավճար 108 000 ՀՀ դրամ: |
| Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար կազմում են մոտ 3 632 507 ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան բյուջեի 9.60 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 482 507<br>1.1. աշխատավարձ (սպասարկող անձնակազմ)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 332 507 ՀՀ դրամ; թվով 2 պահակ<br>1.2. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 150 000 ՀՀ դրամ:<br>2. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 150 000 ՀՀ դրամ: |
| Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |

4/15/4

Ա-15/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-15/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

07.10.15 № 01/80-21

Ձեր № 29545-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.10.2015թ. N 15/15.1/16844-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

034/31771-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/29294-15
06.10.15

ա.15/4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 02.10.2015թ. N15/15.1/16844-15 գրությանը կից ներկայացված ««ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329

034/31572-15

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

2.12.15 N 02/14/14903-15

ա.15/4

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի 2015 թվականի նոյեմբերի 30-ի 189-15ԱՔ/ԵՔ գրության՝ հայտնում ենք, որ «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» լրամշակված ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37881-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

մ. 15/4

« 5 » 10 2015 թ. N ՖԲ/ԱՄ-2-1/ 8760-15

Ձեր 2015-10-02, 15/15.1/16844-15

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ**
**ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ**

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

040/31417-15

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

մ. 15/4

2301, ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ/ֆաքս (+374 23) 2 36 63 E-mailmarzpetaran@Kotayk.region.am

06.10.15 № 01/14.2/4768-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին հասցեագրած 02.10.2015թ. N 15/15.1/16844-15 գրության հայտնում ենք, որ մարզպետարանը տալիս է իր դրական եզրակացությունը՝ <<ՍՕՍ մանկական գյուղեր>> հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն>> ծրագիրը բարեգործական որակելու մասին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

կատարող՝ Վ.Հունանյան
/0223/ 2-67-85

118/31504-15

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**հոկտեմբերի 2015 թվականի N Մ - - Ա**

**քաղ. Երևան**

### «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱ-ՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏԻՊԻ ԽՆԱՄՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և հոկտեմբերի -ի N 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 02/ -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-4-1/ -15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի -ի N 01/19.2/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 816,124,617 դրամ ընդհանուր արժողությամբ «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից

«30» նոյեմբերի 2015թ.

«Տավուշի մարզ,Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | |
|---|---|
| Ծրագրի նպատակը | ▪ իրականացնել մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն;<br>▪ մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների համար ձևավորել հոգատար և ապահով ընտանեկան միջավայր, որը կապահովի նրանց ներդաշնակ զարգացումը և հետագա ինտեգրացումը;<br>▪ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ստեղծում է նոր ընտանիք: Երեխաները դառնում են ՍՕՍ-ընտանիքի անդամ և ապրում են ՍՕՍ-ընտանեկան տներում, ընդ որում յուրաքանչյուր ընտանեկան տանը ապրում, խնամվում և դաստիարակվում են միջինը մինչև 7 երեխաներ: Յուրաքանչյուր ընտանեկան տուն ներառում է 4 ննջասենյակ, հյուրասենյակ, խոհանոց և ճաշասենյակ, 4 սանհանգույց՝ համապատասխան լվացարաններով և զուգարաններով, մեկ տնտեսական սենյակ և խորդանոց: Յուրաքանչյուր ՍՕՍ-ընտանիք ղեկավարվում է ՍՕՍ-մայր դաստիարակի կողմից, որն ապրում և աշխատում է այդ տանը: |
| Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Տավուշի Մարզ, ք. Իջևան,Երևանյան 10<br>ՍՕՍ Մանկական Գյուղ « Իջևան » մասնաճյուղը գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքի քաղաքապետարանի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 1.7 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Այն բաղկացած է 14 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, |

| | | |
|---|---|---|
| | | Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով: |
| | | Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2016- 2018 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կկազմի մոտ 272 041 539 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 70 131 595 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 66 495 235 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 66 495 235 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 68 919 474 ՀՀ դրամ<br>2016-2018 թթ. ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 816 124 617 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Ինսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված մինչև 15 տարեկան ընդհանուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկական Գյուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հանձնաժողովների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա:<br>Սաների ընդունելությունն իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համապատասխան որոշմամբ, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա և հիմնականում ընդգրկվում են կամ երկողմանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անընդմեջ իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 84 555 865 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Շուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 32 563 000 ՀՀ դրամ,<br>2.1. քիչ թիվ չեն կազմում նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները, որոնք իրենց ծնողների անտարբերության, բռնության, անտեսման կամ էլ ընտանեկան բարդ ու խճճված հանգամանքների բերումով է, որ հայտնվում են կացմակերպության խնամքի ներքո: Որպեսզի կարողանանք ապահովել նրանց մտավոր, հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, սաների համար կազմակերպվում են նաև արտադասարանային պարապմունքներ և նախասիրությունների խմբակներ:<br>Նախասիրությունների խմբակների , ինչպես նաև մինչ ՍՕՍ-ՄԳ ծրագրի մեջ ներգրավվելը հանրակրթական դպրոցներ չհաճախած կամ քերհաճախած երեխաների համար, ինչպես նաև հատուկ դասընթացների և առանձնահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային |



| | | |
|---|---|---|
| | | պարապմունքների կազմակերպում և ուսումնական հաստատություններում վճարովի հոսքերում սովորողների ուսման վարձեր (մասնագետների վարձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում )՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 766 500 ՀՀ դրամ;<br>2.2 մարզա-մշակութային միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, թատերական և կրկեսային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մանկական դիսկոտեկներ, ազգային ավանդական և միջազգային տոնական միջոցառումներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 431 000 ՀՀ դրամ;<br>2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 24 365 500 ՀՀ դրամ;<br>*Կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը առավել բովանդակալից անցկացնելու և իրենց հասակակիցների հետ ինտեգրվելու նպատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագիրը կազմակերպում է գործող որևէ ճամբարային համալիրում և ըստ կնքված պայմանագրերի՝ կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:*<br>Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով,իսկ ամառային հանգիստը կազմակերպվում է հուլիս, օգոստոս ամիսներին;<br>3. Շուրջտարյա առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 1 603 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության՝<br>3.1. երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 943 000 ՀՀ դրամ;<br>3.2. հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 660 000 ՀՀ դրամ<br>4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 711 020 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>5. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 390 000 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության;<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 93 605 406 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով՝<br>6.1. ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 50 771 843 ՀՀ դրամ; թվով 14 աշխատակից |

| | | |
|---|---|---|
| | | 6.2. ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 21 179 358 ՀՀ դրամ; թվով 14 աշխատակից<br>6.3. մանկավարժական և բժշկական անձնակազմ՝ 18 504 714 ՀՀ դրամ; թվով 6 աշխատակից<br>6.4. դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 3 149 491 ՀՀ դրամ; թվով 1 աշխատակից<br>7. Հեռահաղորդակցություն, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 256 000 ՀՀ դրամ;<br>8. Կազմակերպական ծախսերը կազմում են մոտ 41 357 248 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով; |
| 10. | Ձեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու համար կազմակերպությունը տրամադրում է ամսեկան ընտանեկան բյուջե, որը ներառում է նրանց սննդի, հիգիենայի պարագաների, լվացող նյութերի, հագուստի, դպրոցական և գրպանի ծախսերի, ինչպես նաև մանր փոխանակումների գումարները: Մանր փոխանակումները, որպես առանձին ծախսերի հոդված, ներառում է տարբեր տեսակի կենցաղային պիտույքների և պարագաների փոխարինում (ափսեներ, բաժակներ, էլեկտրական լամպեր, արդուկ, արդուկի սեղան, սրբիչներ, ինչպես նաև կենցաղային այլևայլ պարագաներ)՝ դրանց մաշվածության, շարքից դուրս գալու և այլևս պիտանի չլինելու դեպքում:<br>Յուրաքանչյուր նոր երեխա ընդունելիս կազմակերպությունը միանվագ հատկացնում է գումար (տես. «նոր երեխայի մուտքի գումար») նրանց համար հագուստ և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ ձեռք բերելու համար:<br>1. Ընդհանուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 84 555 865 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. սնունդ՝ 38 719 800 ՀՀ դրամ<br>1.2. լվացող նյութեր և հիգիենայի պարագաներ՝ 4 126 500 ՀՀ դրամ<br>1.3. հագուստ և կոշիկ՝ 16 391 180 ՀՀ դրամ<br>1.4. դպրոցական ծախսեր՝ 6 814 420 ՀՀ դրամ<br>1.5. գրպանի գումար՝ 3 029 630 ՀՀ դրամ<br>1.6. այլ ընտանեկան ծախսեր՝ 13 111 920 ՀՀ դրամ<br>1.7. առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթի ձեռքբերումների եկամտային հարկ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 084 475 ՀՀ դրամ,<br>1.8. կենսաբանական ընտանիքի աջակցություն՝ 1 277 940 ՀՀ դրամ<br>2. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 24 365 500 ՀՀ դրամ;<br>3. Կոմունալ ծառայություններ ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 711 020 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1. ջրամատակարարման վարձավճար՝ 824 400 ՀՀ դրամ;<br>3.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 2 217 120 ՀՀ դրամ;<br>3.3. գազամատակարարման վարձավճար՝ 8 569 500 ՀՀ դրամ;<br>3.4. աղբահանության վարձավճար՝ 100 000 ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| | | 4. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 390 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1. մանկական գյուղի տարածքի և շինությունների (ընտանեկան տներ, ոռոգման, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում՝ և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում՝ 1 890 000 ՀՀ դրամ;<br>4.2. կահույքի վերանորոգում՝ 50 000 ՀՀ դրամ;<br>4.3. էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, փոշեկուլների, լվացքի մեքենաների, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում՝ 2 450 000 ՀՀ դրամ;<br>5. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 151 668 ՀՀ դրամ;<br>6. Հեռահաղորդակցություն յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 256 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>6.1. հեռախոսի վարձավճար 756 000 ՀՀ դրամ;<br>6.2. ինտերնետի վարձավճար 1 040 000 ՀՀ դրամ;<br>6.3. փոստային առաքումների վարձավճար 460 000 ՀՀ դրամ;<br>7. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցների (Opel Frontera, ՎԱԶ 21214 Նիվա, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Hyundai մակնիշի միկրոավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 462 460 ՀՀ դրամ |
| . | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 2016-2018 թվականներից յուրաքանչյուրի համար կազմում են մոտ 41 357 248 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2016-2018 թվականների տարեկան բյուջեի 15.20 տոկոսը :<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 32 628 788 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>1.1 աշխատավարձ (վարչական և սպասարկող անձնակազմ) ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 28 477 120 ՀՀ դրամ, թվով 8 աշխատակից,<br>1.2 աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 151 668 ՀՀ դրամ;<br>2. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցների (Opel Frontera, ՎԱԶ 21214 Նիվա, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Hyundai մակնիշի միկրոավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 462 460 ՀՀ դրամ,<br>3. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում յուրաքանչյուր տարվա համար՝ 1 266 000 ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է Հ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահությա նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարան տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերո զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայ շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերակա ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժակա գործունեության աուդիտների իրականացման միջոցով: Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարությա բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

ԺՐ 15/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԺՐ 15/5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

08.10.15 № 07/80-21

Ձեր № 29699-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.10.2015թ. N 15/15.1/16846-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում ամրագրել միայն այն ծախսատեսակները, որոնցով ենթադրվում են ապարանքների ու ծառայությունների ձեռք բերման (ներմուծման) գործարքներ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

01/31934-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/29270-15
06.10.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ա.15/5

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 02.10.2015թ. թիվ 15/15.1/16846-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/31553-15

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**
**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

2.12.15 N 02/14/14905-15   Ա.15/5
Ձեր N ________________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի 2015 թվականի նոյեմբերի 30-ի 191-15ԱՔ/ԵՔ գրության՝ հայտնում ենք, որ «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» լրամշակված ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37884-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

մ. 15/5

« 05 » 10 2015 թ. N 8K/ԱՖ.Ա-2-1/
8759-15

Ձեր 2015-10-02, 15/15.1/16846-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/31394-15

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ՏԱՎՈՒՇԻ
ՄԱՐԶՊԵՏ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս՝ /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.mtaes.am

01/19.2/4771-15
05.10.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

մ. 15/5

*Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան*

Ձեր 02.10.2015թ. թիվ 15/15.1/16846-15 գրության կապակցությամբ հայտնում եմ, որ <<ՍՕՍ-մանկական գյուղեր>> հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող <<Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն>> 2016-2018թթ. ծրագրի որոշման նախագիծը քննարկվել է Տավուշի մարզպետարանում: Ծրագրի նկատմամբ առաջարկություններ ու դիտողություններ չկան:

Գտնում եմ, որ այն կարելի է որակել բարեգործական:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ԱԲՈՎՅԱՆ

Կատարող՝ Հ. Քոչարյան
հեռ. 0263-3-45-61

119/31432-15

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող **«Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»** ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 08.10.15, N 07/80-2/29699-15 | |
| 1. Անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում ամրագրել միայն այն ծախսատեսակները, որոնցով ենթադրվում են ապրանքների ու ծառայությունների ծեռք բերման (ներմուծման) գործարքներ | 1. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

Ար.15/5

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հոկտեմբերի 2015 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

Ար.15/6

**«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱ-Մ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ <u>ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԽՆԱՄՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ</u>**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և հոկտեմբերի -ի N 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 02/ -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱնՄ-4-1/ -15 ու Երևանի քաղաքապետի 2015 թվականի հոկտեմբերի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 577,237,893 դրամ ընդհանուր արժողությամբ «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայա

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրա

հոգաբարձուների խորհրդի կողմ

«30» նոյեմբերի 2015

«Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների
երկարաժամկետ խնամք և դաստիարակություն»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Առանց ծնողական խնամքի մնացած 15-23 տարեկան պատանիների երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն՝ ընտանեկան մոտեցմա կիրառմամբ: |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքեր պարտադիր վճարների օրենքներով նախատեսված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործակա հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ ք. Երևան Հր. Քոչարի շենք 8 բն. 18-19, Երզնկյան փող. տուն 79 և Նար-Դոսի փող. 3 հասցեներում գտնվող երիտասարդական տներում:<br>Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույք կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 5 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով:<br>Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Տարեկան կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 192 412 631 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 48 265 658 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 48 015 658 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 47 915 658 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 48 215 657 ՀՀ դրամ<br>2016-2018 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 577 237 89 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված 15-23 տարեկան այն պատանիներն ու երիտասարդները, ովքեր ընդգրկված են եղել ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղի ծրագրում: Ներկայումս ծրագրում ընդգրկված են 95 պատանիներ ու երիտասարդներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1.Որպեսզի սաները կարողանան հոգալ իրենց առօրյա նիստուկացը, կազմակերպությունը՝ աստիճանական մարման սկզբունքով, տրամադրում է ամսեկան նպաստ, որը ներառում է նրանց սննդի, հիգիենայի պարագաների, լվացող նյութերի, հագուստի, ուսումնական և գրպանի ծախսերի գումարները: Նպաստները տնօրինվում են երիտասարդների կողմից: Նպաստի չափը մնում է անփոփոխ, եթե երիտասարդը ուսանող է և ցուցաբերում է միջինից բարձր առաջադիմություն:<br>Ընդհանուր թվով 95 երիտասարդների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-երիտասարդական տների և կիսաանկախ բնակության փուլի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 44 748 460 ՀՀ դրամ, նույն թվում<br>1.1 սնունդ՝ 13 616 646 ՀՀ դրամ<br>1.2 լվացող նյութեր և հիգիենայի պարագաներ՝ 1 625 690 ՀՀ դրամ<br>1.3 հագուստ և կոշիկ՝ 6 518 998 ՀՀ դրամ<br>1.4 դպրոցական ծախսեր՝ 948 461 ՀՀ դրամ<br>1.5 գրպանի գումար՝ 4 155 110 ՀՀ դրամ<br>1.6 այլ ընտանեկան ծախսեր՝ 1 625 690 ՀՀ դրամ<br>1.7 կիսաանկախ փուլում գտնվող երիտասարդների նպաստ 16 257 865 ՀՀ դրամ;<br>Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 33 803 950 ՀՀ դրամ: Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով,իսկ ամառային հանգիստը կազմակերպվում է հուլիս,օգոստոս ամիսներից;<br>Այն երիտասարդները, ովքեր չեն ցանկանում իրենց ուսումը շարունակել ԲՈՒՀ-երում՝ մասնագիտական կրթություն ստանալուց հետո անցնում են աշխատանքի և շարունակում են ապրել երիտասարդական տանը մինչև 18-19 տարեկան դառնալը: ԲՈՒՀ ընդունվել ցանկացողները հաճախում են Երևանյան դպրոցներ և անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը վարձում է մասնագետներ՝ նրանց ԲՈՒՀ-ական ընդունելության քննություններին նախապատրաստելու համար: Վճարովի համակարգում ուսանելու դեպքում կազմակերպությունը վճարում է բոլոր ուսումնական վարձերը: Կազմակերպությունը երիտասարդներին աջակցում է մասնագիտական պլանների ձեռք բերման հարցերում: |

| | |
|---|---|
| | 2.1 մասնագիտական պատրաստության պարապմունքներ (մասնագետների վարձավճար) և ուսման վարձեր յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 25 976 450 ՀՀ դրամ<br>2.2 մասնագիտական պիտույքների և պարագաների ձեռքբերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 865 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար;<br>2.3 բովանդակալից ժամանցի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 500 000 ՀՀ դրամ<br>2.4 ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 462 500 ՀՀ դրամ;<br>3. Առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երիտասարդներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 5 343 840 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1 երիտասարդների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 094 840 ՀՀ դրամ;<br>3.2 հոգեբանական աջակցություն երիտասարդներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 249 000 ՀՀ դրամ<br>Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 013 478 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>5. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 554 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության;<br>6. Երիտասարդների առաջին անհրաժեշտության պարագաներ բնակության կիսաանկախ փուլ տեղափոխվելիս, նրանց համար վարձակալված բնակարանների վարձավճար և աջակցություն բնակարան ձեռքբերելու հարցերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 15 405 556 ՀՀ դրամ: Երիտասարդների առաջին անհրաժեշտության պարագաներ բնակության կիսաանկախ փուլ տեղափոխվելիս և բնակարան ձեռքբերելու ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության,իսկ նրանց համար վարձակալված բնակարանների վարձավճարների ծախսերը՝ ամսեկան կտրվածքով՝<br>6.1 երիտասարդների առաջին անհրաժեշտության պարագաներ բնակության կիսաանկախ փուլ տեղափոխվելիս՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 050 000 ՀՀ դրամ<br>6.2 երիտասարդների համար վարձակալված բնակարանների վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 355 556 ՀՀ դրամ<br>6.3 աջակցություն երիտասարդներին բնակարան ձեռքբերելու հարցերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 000 000 ՀՀ դրամ; |



| | |
|---|---|
| | 7. Երիտասարդների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 849 200 ՀՀ դրամ,<br>8. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 53 029 619 ՀՀ դրամ, նույն թվում՝<br>8.1 երիտասարդական տների մանկավարժներ՝ 49 728 157 ՀՀ դրամ, թվով 15 աշխատակից,<br>8.2 երիտասարդական տների խոհարարներ՝ 3 301 462 ՀՀ դրամ, թվով 3 աշխատակից,<br>9. Հեռահաղորդակցություն , ինտերնետ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 081 800 ՀՀ դրամ,<br>10. Հանրային կապեր և ներկայացուցչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 179 000 ՀՀ դրամ,<br>11. Կազմակերպական ծախսերը յուրաքնչյուր տարվա համար կազմում են մոտ 15 403 728 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Մասնագիտական պիտույքների և պարագաների ձեռքբերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 865 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար;<br>2. ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 462 500 ՀՀ դրամ;<br>3. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 5 013 478 ՀՀ դրամ;<br>3.1 էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 1 655 000 ՀՀ դրամ;<br>3.2 ջրամատակարարման վարձավճար՝ 464 800 ՀՀ դրամ;<br>3.3 գազամատակարարման վարձավճար 2 550 000 ՀՀ դրամ<br>3.4 աղբահանության վարձավճար՝ 98 000 ՀՀ դրամ;<br>3.5 տեղական հարկեր(գույքահարկ)՝ 245 678 ՀՀ դրամ;<br>Ինչպես երիտասարդական տները, այնպես էլ դրանցում գտնվող գույքը ձեռք են բերված կազմակերպության միջոցներով և հանդիսանում են կազմակերպության սեփականությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երիտասարդական տներում միջինը տարեկան 12 սաներ են ապրում և գույքը համապատասխանաբար ենթարկվում է մաշվածության՝ կազմակերպությունը յուրաքանչյուր տարի որոշակի գումար է առանձնացնում կահույքի՝ մահճակալներ, պահարաններ, գրասեղաններ, սեղաններ և աթոռներ, խոհանոցային և փափուկ կահույք, ինչպես նաև էլեկտրական և այլ սարքավորումների՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազօջախներ, վառարաններ, ջեռուցիչներ, փոշեկուլներ, արդուկներ և այլն վերանորոգման կամ մասնակի փոխարինման համար:<br>4. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 554 000 ՀՀ դրամ; |

| | | |
|---|---|---|
| | | 4.1 Երիտասարդական տների շինությունների (երտասարդական տներ, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում և արդիականացում՝ 4 673 000 ՀՀ դրամ;<br>4.2 կահույքի ձեռք բերում և վերանորոգում 2 301 000 ՀՀ դրամ;<br>4.3 էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, լվացքի մեքենաների, համակարգիչի ձեռք բերում և վերանորոգում՝ 1 580 000 ՀՀ դրամ<br>5. Երիտասարդների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 849 200 ՀՀ դրամ:<br>6. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 750 000 ՀՀ դրամ;<br>7. Հեռախոսակապ, ինտերնետ և գրասենյակային պարագաներ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 081 800 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>7.1 հեռախոսի վարձավճար 2 362 800 ՀՀ դրամ;<br>7.2 ինտերնետի վարձավճար 1 719 000 ՀՀ դրամ;<br>8. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցի(Opel Astra մակնիշի ավտոմեքենայի) նորոգում, սպասարկում, շահագործում,՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 004 250 ՀՀ դրամ:<br>9. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 2 594 000 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար կազմում են մոտ 15 403 728 ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան բյուջեի 8.01 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 805 478 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>1.1. աշխատավարձ (վարչական անձնակազմ)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 055 478 ՀՀ դրամ, թվով 3 աշխատակից;<br>1.2. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 750 000 ՀՀ դրամ;<br>2. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցի(Opel Astra մակնիշի ավտոմեքենայի) նորոգում, սպասարկում, շահագործում,՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 004 250 ՀՀ դրամ:<br>3. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 2 594 000 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ձր 15/6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

08.10.15 № 07/80-21

Ձեր № 23697-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.10.2015թ. N 15/15.1/16848-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

034/31935-15

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

06/3-3/29269-15
06.10.15

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

ձր 15/6

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 02.10.2015թ. թիվ 15/15.1/16848-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/31554-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

02.12.15 N 02/14/14901-15 ձր 15/6

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի 2015 թվականի նոյեմբերի 30-ի 190-15ԱՔ/ԵԲ գրության՝ հայտնում ենք, որ «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն»լրամշակված ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37880-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ձր 15/6

« 05 » 10 2015 թ. N ԶԿ/ԱՇԼՄ-2-1/8758-15

Ձեր 2015-10-02, 15/15.1/16848-15

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով ««ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

040/37403-15

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2015 թվականի N Մ - -Ա Մ-15/Կ

քաղ. Երևան

**«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱ-ՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՈՒ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ-ՆԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱԼՔՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և հոկտեմբերի -ի N 06/3-3/ -15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N 02/ -15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի -ի N ՖԲ/ԱՆՄ-4-1/ -15, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի -ի N 01/ -15, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի -ի N 01/19.2/ -15 ու Երևանի քաղաքապետի 2015 թվականի հոկտեմբերի -ի N եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 458,211,339 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից

« 30 » նոյեմբերի 2015թ.

«Գյումրի,Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելման»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ինչպես «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության , այնպես էլ Հայաստանյան «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական առաջնահերթություն է մանկալքության կանխարգելմանն ուղղված գործունեությունը: Այս ուղղությամբ կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում: Այս ծրագրերն ուղղված են ընտանիքների ամրապնդմանը և երեխաների լքելու դեպքերի ռիսկայնության նվազեցմանը: Ընտանիքներին կազմակերպությունը ցուցաբերում է ամենայն աջակցություն, նրանց սոցիալ-իրավական խնդիրների, ներընտանեկան բարոյա-հոգեբանական մթնոլորտի բարելավման, ինչպես նաև զբաղվածության և առողջապահական հարցերում.<br>Այս ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ, մասնավորապես՝ նրանց կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Գյումրիում ծրագիրն իրականացվում է գործընկեր կազմակերպության կողմից վարձակալած տարածքում, Երևանում՝ Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի շենքում, իսկ Իջևանում՝ թիվ 3 դպրոցի կողմից տրամադրված տարածքում:<br>1. Գյումրի և Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում մանկալքության դեպքերի քանակի նվազեցում ;<br>2. ծրագրի շահառու ծնողների մոտ ծնողավարության գիտելիքների և հմտությունների ավելացում;<br>3. ծրագրի շահառու երեխաների հոգեբանական վերականգնում;<br>4. ծրագրի շահառու ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում;<br>5. Ներընտանեկան միջանձնային հարաբերությունների բարելավում: |

Մ-15/Կ

| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարեգործական դրական նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքեր պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնա կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործակա հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Գյումրի և Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում, այն առնչվում է սոցիալական, իրավական կրթական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Տարեկան կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 152 737 113 ՀՀ դրամ և բու եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 37 352 858 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 38 994 578 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 37 329 578 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 39 060 099 ՀՀ դրամ<br>2016-2018 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 458 211 339 Հ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնա կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են սոցիալական ռիսկի ենթակա 1510 երեխաներ և 61 ընտանիքներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 999 000 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով՝<br>1.1. Դպրոցական պարագաների տրամադրում, ուսման վարձերի վճարում, երեխաների հետ արտաժամյա պարապմունքների և նախասիրությունների խմբակների կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 659 000 ՀՀ դրամ;<br>1.2. Նյութեր խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփամ, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 340 000 ՀՀ դրամ;<br>2. Առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների |



| | | |
|---|---|---|
| | | դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 19 010 830 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով՝<br>2.1. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 740 000 ՀՀ դրամ<br>2.2. անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 940 830 ՀՀ դրամ,<br>2.3. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 330 000 ՀՀ դրամ:<br>3. Ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում և տնտեսական կայունացման աջակցություն ծրագրի շահառուներին յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 19 799 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով;<br>4. Տրամադրվող տարածքի(Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նվիրատվության կարգով տրամադրված տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 610 900 ՀՀ դրամ: Տրամադրվող տարածքի վերանորոգման ծախսերը և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի ծախսերը կատարվում են տարեկան կտրվածքով,իսկ կոմունալ ծառայությունների ծախսերը ամսեկան կտրվածքով;<br>5. Շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝կլոր սեղան և շահառուների խնդիրների քննարկումներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 947 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով;<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 77 039 323 ՀՀ դրամ(4 հոգեբան և 24 սոց.աշխատող): Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>7. Հեռահաղորդակցություն ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 368 000 |

| | |
|---|---|
| | ՀՀ դրամ; |
| | 8. Կազմակերպական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար կազմում են մոտ 13 963 060 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրերի շրջանակներում նաև աջակցություն է ցուցաբերվում երեխաների հոգեբանական կայունության, սոցիալիզացիայի, կրթական և ուսումնական հարցերում: Ելնելով յուրաքանչյուր կոնկրետ ընտանիքի կարիքներից՝ անհրաժեշտության դեպքում, կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով ժամանակավորապես աջակցում է «սոցիալական փաթեթով», որը ենթադրում է որոշակի քանակի սննդամթերքի, հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների կամ հիգիենայի պարագաների և դեղորայքի տրամադրում՝ ելնելով կոնկրետ ընտանիքի կարիքներից:<br>1. Ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում և տնտեսական կայունացման աջակցություն ծրագրի շահառուներին յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 19 799 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1 ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում կազմում է մոտ 12 177 000 ՀՀ դրամ<br>1.2 տնտեսական կայունացման աջակցություն ծրագրի համար կազմում է մոտ 7 622 000 ՀՀ դրամ :<br>2. Տրամադրվող տարածքի և սարքավորումների վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 610 900 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>2.1 տրամադրվող տարածքի վերանորոգում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 300 000 ՀՀ դրամ;<br>2.2 համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում 645 000 ՀՀ դրամ;<br>2.3 կոմունալ ծառայություններ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 276 340 ՀՀ դրամ;<br>2.4 գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 389 560 ՀՀ դրամ;<br>3. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 430 400 ՀՀ դրամ;<br>4. Հեռահաղորդակցություն ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 368 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1 հեռախոսի վարձավճար՝ 1 400 000 ՀՀ դրամ,<br>4.2 ինտերնետի վարձավճար՝ 968 000 ՀՀ դրամ,<br>5. Գրասենյակների նյութատեխնիկական ապահովում՝յուրաքանչյուր տարվա համար |



| | |
|---|---|
| | կազմում է մոտ 3 873 000 ՀՀ դրամ; |
| Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար կազմում են մոտ 13 963 060 ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան բյուջեի 9.14 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 430 400 ՀՀ դրամ,<br>2. Աշխատակիցների գործուղման և տրանսպորտային ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 659 660 ՀՀ դրամ;<br>3. Գրասենյակների նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 873 000 ՀՀ դրամ; |
| Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՁՐ.15/7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

08.10.15 № 07/80-2/

Ձեր № 29791-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 02.10.2015թ. N 15/15.1/16849-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում ամրագրել միայն այն ծախսատեսակները, որոնցով ենթադրվում են ապարանքների ու ծառայությունների ձեռք բերման (ներմուծման) գործարքներ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն.Կարապետյան
հեռ. 011 910-437

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

0613-3/29272-15

06.10.15

ՁՐ.15/7

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 02.10.2015թ. թիվ 15/15.1/16849-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

084/31556-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

2.12.15 N 02/14/34882-15 ՝ ՄՐ-15/7

Ձեր N ________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի 2015 թվականի նոյեմբերի 30-ի 188-15ԱՔ/ԵՔ գրության՝ հայտնում ենք, որ «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» լրամշակված ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/37822-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

ՄՐ-15/7

« 5 » 10 2015 թ. N ՓԲ/ԿՁՎ-2-1/8762-15

Ձեր 2015-10-02, 15/15.1/16849-15

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ**

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

040/31415-15

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ**

ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR

4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г, Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 3-23-56 Ֆաքս /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mtaes.gov.am Կայք WEB http://tavush.mtaes.am

01/21.1/4769-15
05.10.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ա. 15/7

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն Ձեր 02.10.2015թ. թիվ 15/15.1/16849-15 գրության հայտնում եմ, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից նախատեսվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

Հ.ԱԲՈՎՅԱՆ

Կատ. Գ.Հարությունյան
Հեռ. 026334561

119/31436-15

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« 7 » 10 2015թ.
N: 01/5118-15

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

Ա. 15/7

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

*Ձեր՝ 02.10.2015թ.*
*թիվ՝ 15/15.1/16849-15*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Մարզպետարանում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» որոշման նախագիծը :

Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝ Ֆ.ՑՈՒԼԱԿՅԱՆ

Կատ Հ.Արշակյան
/0312 3-16-26/

116/31644-15

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
# ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 10) 514 150, էլ.փոստ՝ kamo.areyan@yerevan.am

№ 02/35-52164Կ «13» 10 2015թ.

ՁԻ-15/7

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան.

Ի պատասխան Ձեր 02.10.2015թ. հ. 15/15.1/16849-15 գրության՝ տեղեկացնում ենք, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ քաղաքապետարանն առարկություն չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Կ. ԱՐԵՅԱՆ

2883

ՀՀ 100-32582

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող **«Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում»** ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 08.10.15, N 07/80-2/29711-15 | |
| 1. Անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում ամրագրել միայն այն ծախսատեսակները, որոնցով ենթադրվում են ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման (ներմուծման) գործարքներ | 1. Կցված է ծրագրի լրամշակված տարբերակը |

ՁԻ-15/7

ՍԱՌԱՎԲՌ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա** Մ.15/8

## «ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ-ՎԱՆԱՁՈՐ՝ «ԿՐԹԱԿԱՆ-ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՍՏԵՂԾՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37494-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/37620-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 02/14/14601-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10540-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 1/32.2/17579-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 06/18.1/6989-15, ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 101/104.3.2/5112-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, առաջին Եկմալյան 6, ՀՎՀՀ՝ 02552842) իրականացվող՝ 11,875,000 դրամ ընդհանուր արժեքով «Օրրան-Վանաձոր՝ Կրթական-փորձարարական այգու ստեղծում» բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2015 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վանաձոր քաղաքի Վարդանանց 3-րդ նրբանցք 10 հասցեում «Օրրան» կենտրոնի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 6,263,700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-



Մ.15/8

գրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

Հաստատում եմ
"Օրրան" բարեգործական հասարակական կազմակերպության
տնօրեն Արմինե Հովհաննիսյան

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
## «ՕՐՐԱՆ-Վանաձոր՝ «Կրթական-փորձարարական այգու ստեղծում»

2015թ.-2016 թ

| | |
|---|---|
| Ծրագրի նպատակները | ք. Վանաձոր, Վարդանանց փ. 3-րդ նրբանցք, 10 հասցեում՝ Օրրանի սեփական տարածքում ձեռք բերված 2008թ.-ին, տնկել այգի: Դա հնարավորություն կտա Օրրան-Վանաձորի մանուկ շահառուներին զբաղվել այգեգործությամբ և փորձ ձեռք բերել հողագործության ոլորտում, իսկ այգում տնկված ծառերից ստացվող բերքը կօգտագործվի «Օրրան-Վանաձոր՝ Օգնություն կարիքավոր ընտանիքներին» սննդի ծրագրում: |
| Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը: |
| Բարեգործը (բարեգործները) | «Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամ |
| Ծրագրի կատարողը | «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն<br>ՀՎՀՀ 02552842<br>Առաջին Եկմալյան 6<br>Երևան, Հայաստանի Հանրապետություն<br>Հեռ.՝ 53-51-67 |
| Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Վանաձոր<br>Սոցիալական բնագավառ |
| Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 11,875,000 (տասնմեկ միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ |
| Բարեգործություն ստացողը | «Օրրան-Վանաձոր՝ Օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրում ներգրավված 12-16 տարեկան 65 շահառու երեխաները: |
| Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսել է 2015թ. նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31,2016թ . |
| Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է | • Նոյեմբեր 2015թ. Հողի գեոլոգիական նախնական հետազոտում- 40000 ( քառասուն հազար) ՀՀ դրամ: |

2

| | |
|---|---|
| առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | • Նոյեմբեր-Դեկտեմբեր 2015թ.- Տարածքի հարթեցում, բետոնե պատի կառուցում, բերրի հողի լցնում՝ 20 սմ խորությամբ՝ 6,263,700 (Վեց միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:<br>• Հունվար-Փետրվար 2016թ. երեխաների հետ հողագործական աշխատանքների մասին դասընթացների կազմակերպում՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>• Մարտ 2016 թ.- Ոռոգման ջրի հորատանցքի փորում, պոմպի տեղադրում, խողովակների անցկացում, ջրի հաշվիչի տեղադրում, փաստաթղթերի ձևակերպում՝ 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:<br>• Ապրիլ 2016թ.: 400 տնկիների ձեռքբերում, պարարտանյութերի ձեռքբերում, հողագործական գործիքների (ջրի խողովակ, ցնցուղ, դույլ, փոցխ, բահ և այլն) ձեռքբերում՝ 1,171300 (մեկ միլիոն հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր ) ՀՀ դրամ:<br>• Մարտ 2016թ- Դեկտեմբեր 2016թ.: Աշխատավարձ գյուղատնտեսին՝ 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:<br>• Հունվար 2016 թ -Դեկտեմբեր 2016թ.- բենզինի ձեռքբերում՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: |

| Ձեռք բերված (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը: | N | Ամսաթիվ | Պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի համարը | Կազմակերպության կամ մատակարարի անվանումը | Նկարագրությունը | ՀՀ դրամ տարեկան առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | | | Արտադրական հետազոտական հետազննական կոոպերատիվ "Հ.Ա.Կ.Պոլիտեխնիկ" ԱԿ | Հողի գեոլոգիական նախնական հետազոտություն | 40,000 |
| | 2 | 29.09.2015թ. | 1 | «ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ | Տարածքի բարեկարգման աշխատանքներ | 6,263,700 |
| | 3 | | | | 400 հատ տնկիների ձեռքբերում | 700,000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 4 | | | «ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ | Ոռոգման ջրի հորատանցքի փորում, պոմպի տեղադրում և խողովակների անցկացում | 2,800,000 |
| | | 5 | | | "Լոռի-Ջրմուղկոյուղի"ՓԲԸ | Ջրի հաշվիչի տեղադրում, փաստաթղթերի ձևակերպում | 200,000 |
| | | 6 | | | | Գյուղատնտեսական գործիքների ձեռքբերում | 471,300 |
| | | 7 | | | | Բենզինի ձեռքբերում | 200, 000 |
| | | | | | | Ընդամենը | 10,675,000 |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | • Բենզին ձեռքբերում- 200,000 ՀՀ դրամ<br>• աշխատավարձ գյուղատնտեսին՝ 1,000,000 ՀՀ դրամ<br><br>Ընդամենը՝ 1,200,000 դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | 1.ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>2. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն<br>3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>4. ՀՀ առողջապահության նախարարություն<br>5. ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>6. Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություններ<br>7. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ<br>8.«ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն » հետ:<br>«Օրրանը» համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների հետ: |



| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • եռամսյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• ամսական եւ եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» ԲՀԿ-ի տնօրենների խորհրդին<br>• գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» ԲՀԿ –ի գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով<br>• եռամսյակային հաշվետվություններ կառավարությանն առընթեր պետական հարկային ծառայություններին |

Ծրագրի ղեկավար ————— Արմենուհի Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Մ.15/Բ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

30.11.15թ. №07/80-2/37494-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.11.2015թ. N 15/15.4/19912-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրրան-Վանաձոր՝ «Կրթական-փորձարարական այգու ստեղծում» բարեգործական ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղանյան
Հեռ. 011 910 435

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

N06/3-3/37620-15

01.12.15թ.

Մ.15/Բ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239171) 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված՝ N11-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների ձեռքբերում՝ 5,496,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Дл.15/10.18

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-912-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի 1-ին կետում նշված բեռի փոխադրման ծախսերը (4.907 եվրո) չեն համապատասխանում կից փաստաթղթերում ամրագրված բեռի փոխադրման արժեքին (4,907.37 եվրո): | Որոշման նախագծում կատարվել է համապատասխան ուղղում: |
| | |
| | |

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՁՐ 15/11.2

___ դեկտեմբերի 2015 թվականի N Մ - -Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1253-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սպիտակ քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1253-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N131-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի ձեռքբերում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՁՐ 15/11.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

02.12.2015թ. №07/80-2/37827-15

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.11.2015թ. N 15/15.6/20096-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1253-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղանյան
հեռ. 011 910-435

034/37863-15
02.12.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան 1
Հեռ. 011 800077

27.11.15թ. Мr.15/11.2
№ 06/3-3/37222-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.11.2015թ. թիվ 15/15.6/20096-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1253-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

*Հարգանքով՝*

Վ. Միրումյան

ԳՍՀՄ բաժին, Ա. Բաբախանյան
հեռ. 011 800329

27.11.15թ
№ 034/37301-15

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Мr.15/11.3

**___ դեկտեմբերի 2015 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 07/80-2/-15 և դեկտեմբերի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռեդ-փոինթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2015 թվականի նոյեմբերի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 596,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա.15/11.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

03.12.2015թ. №07/80-2/38310-15

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.12.2015թ. N15/15.6/20431-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդյան
հեռ. . 011-910-437

034/38090-15
03.12.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան 1
Հեռ. 011 800077

N: 06/3-3/38040-15
02.12.2015թ.
Ա.15/11.3

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.12.2015թ. թիվ 15/15.6/20431-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 011 800329

034/37912-15
02.12.2015թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ս 15/11.4

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**___ դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-1167-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Բանանց» ֆուտբոլային ակումբի խաղադաշտի վերակառուցում» N Մ-1167-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Edel Grass» ՍՊԸ-ի հետ (Fabrieksstraat 13, 8281 BW Genemuiden, the Netherlands) 2015 թվականի նոյեմբերի 5-ին կնքված՝ N Rev 003 պայմանագրի N Nbr 62090430ED-Rev003 նախահաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 18,815 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ս 15/11.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.  (+374 60) 700 255

02.12.2015թ. №07/80-2/38005-15

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.11.2015թ. N 15/15.6/20120-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-1167-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդյան
հեռ. 011 910-435

034/37868-15

Մ-15/11.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Մ: 06/3-4/37714-15
01.12.2015թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի

համակարգման հանձնաժողովի նախագահ

պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 26.11.2015թ. թիվ 15/15.6/20120-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-1167-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, Ա. Մաթևոսյան

հեռ. 011 800 312

034/37689-15
01.12.2015թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա

քաղ. Երևան

Մ-15/11.5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2015 թվականի հոկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և հոկտեմբերի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետալ-Դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2015 թվականի նոյեմբերի 23-ին կնքված N 56 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում չժանգոտվող մետաղից բռնակների պատրաստում և տեղադրում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ՆՐ.15/11.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

02.12.15 № 07/80-21

Ձեր № 38094-15

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.11.2015թ. N 15/15.1/20254-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղդոյան
հեռ. 011 910-437

034/37930-15

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՆՐ.15/11.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

0613-3/37790-15
1.12.15

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**

**համակարգման հանձնաժողովի նախագահ**

**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 27.11.2015թ. թիվ 15/15.1/20254-15 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, Ա. Մաթևոսյան
հեռ. 011 800 312

034/37720-15

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

ԽՐ. 15/11.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի -ի N 07/80-2/ -15 և դեկտեմբերի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00066784) 2015 թվականի հունիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային, ռեստորանային սրահի տրամադրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 303,041 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ԽՐ. 15/11.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

3.12.15 № 07/80-2/

Ձեր № 38221-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.12.2015թ. N15/15.1/20429-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայաստանի մանուկներ հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բաղանյան
հեռ.. 011 910-435

ԹՎՄ|38049-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077

06/3-3/38358-15

4.12.15

Մ-15/11.6

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 01.12.2015թ. N15/15.1/20429-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության ~~բարեգործական ծրագրերի~~ համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկներ հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
Հեռ 011-800329

034/38131-15

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

Մ-15/11.7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/ -15 և նոյեմբերի -ի N 03/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2014 թվականի հունիսի 23-ին կնքված N AR 230614/2 պայմանագրում նշված գործարքը (փոխանցման հաշիվ 7, 11 նոյեմբերի 2015 թվական), որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում՝ 260,131.41 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ա. 15/11.7


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255


01.12.15 N 07/80-21

Ձեր N 37751-15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 24.11.2015թ. N 15/15.1/19940-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1296-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան


Կատարող՝ Ա. Բաղդանյան
հեռ.. 011 910-435


084/37714-15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077


06/3-3/36999-15

Ա. 15/11.7 26.11.15

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 24.11.2015թ. N15/15.1/19940-Т5 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի NՄ-1296-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սեյվ դը չիլդրեն Ինտերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան


ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329


084/37754-15

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- -Ա** ԱՄ.15/11.Յ

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N ԱԿ/15/13781-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38082-15 ու դեկտեմբերի -ի N 06/3-3/ -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505735) 2015 թվականի նոյեմբերի 24-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/4-2015/26 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է դողորայքի գնում՝ 63,777,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ԱՄ.15/11.Յ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

02.11.15թ № 07/802/38082-15

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.11.2015թ. N15/15.4/20283-15 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման ~~հանձնաժողովի~~ 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ա. Բադալյան
հեռ. 011 910-435

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 11) 800077


N 06/3-3/38258-15
03.12.15թ. Ա.15/11.8

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 30.11.2015թ. N15/15.4/20283-15 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան


ԳԱՀՄ բաժին, Ն.Բեժանյան
011-800-329


N 034/38077-15
03.12.15թ.

---

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ նոյեմբերի 2015 թվականի N Մ- -Ա
Ա.15/11.9

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/-/-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թթ. իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02535097) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան Հյուրանոց» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533075) 2015 թվականի նոյեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրացնային ծառայությունների մատուցում՝ 1,903,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի կողմից

«23 նոյեմբերի» 2015թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015 – 16թթ. իրականացվող

# ԾՐԱԳԻՐ

1 Ծրագրի նպատակը

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) ծրագրի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության կայացմանը, մարդու իրավունքների և ազատությունների իրականացմանն ուղղված բարեփոխումների արդյունավետ կյանքի կոչելուն, խրախուսել հանդուրժողականության հասարակության տարածմանը հասարակության տարբեր խոցելի խմբերի նկատմամբ, աջակցել քաղաքացիական հասարակության կառույցների զարգացմանը, տարածել բաց հասարակության արժեքները և սատարել բաց, թափանցիկ և արդյունավետ կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու կիրառմանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում, նպաստել որակյալ կրթության և առողջապահության մատչելիությանը հանրության լայն շերտերի համար, ներառյալ խոցելի խմբերը: Ծրագիրը նպատակ ունի նաև աջակցել քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների, ներառյալ հասարակական կազմակերպություններին, անհատներին, ակադեմիական միջավայրի ներկայացուցիչներին, լսելի դարձնել իրենց ձայնը պետությանը և հասարակությանը հուզող տարբեր խնդիրների շուրջ, ինչպես նաև ապահովել նրանց մասնակցության բարձր և արդյունավետ մակարդակ պետական կառավարման գործընթացներում:

*ԲՀԻՕՀՀՄ-ն ունի հետևյալ ուղղությունները.* 1. Քաղաքացիական հասարակություն, 2. Հանրային առողջապահություն, 3. Կրթություն, 4. Իրավունք և քրեական արդարադատություն:

ԲՀԻՕՀՀՄ-ի նպատակները հետևյալներն են ըստ ուղղությունների.

*Քաղաքացիական հասարակություն*

- Հիմնադրամն այս ծրագրի միջոցով, ներառյալ դրամաշնորհի տրամադրելն ու սեփական կարողությունները օգտագործելը, աջակցելու է Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը և հզորացնելու է հասարակական կազմակերպությունների կարողությունները՝ արդյունքում ունենալով անկախ կազմակերպություններ, որպես կարևոր համակարգ՝ երկրում ժողովրդավարական գործընթացների առավել արդյունավետ իրականացման համար: Նաև աջակցելու է Հայաստանի հասարակության տարբեր խոցելի խավերին՝ կանանց, երեխաների, տարեցների, ազգային, կրոնական, սեռական փոքրամասնությունների, սոցիալապես անապահով մարդկանց, փակ և կիսափակ հաստատություններում գտնվողներին, իրենց հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացմանն ու պաշտպանությանը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության և մեր երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների դրույթների: Այս ծրագիրը հնարավորություն է ստեղծելու նպաստել Հայաստանի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ եկած խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ու դրանց շուրջ քննարկումների անցկացմանը՝ պետական, հասարակական, միջազգային կառույցների մասնակցությամբ: Հիմնադրամն այս ծրագրի շրջանակներում նպաստելու է մարզային բնակչության ակտիվությանը՝ սեփական համայնքի կառավարման գործընթացներում առավել մասնակցային դառնալուն, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնելու երիտասարդներին կյանքի կոչել գաղափարներ, որոնք ուղղված կլինեն իրենց համայնքի զարգացմանը, նաև հասարակության ուշադրությունը գրավելուն երկրի համար կարևորություն ունեցող խնդիրներին: «Քաղաքացիական հասարակություն» ուղղության գաղափարները իրականացնելուն նպաստելու համար ԲՀԻՕՀՀՄ-ն կտրամադրի դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատներին, ինչպես նաև, Հիմնադրամն ինքը կիրականացնի մի շարք միջոցառումներ՝ հետազոտություններ, զեկույցների պատրաստումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, քառավեճեր՝ ընդգրկելով տեղական և միջազգային փորձագետներ տարբեր նախաձեռնություններում:

*Հանրային առողջապահություն*

- Այս ծրագրի շրջանակներում Հիմնադրամը շարունակելու է ջատագովել Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկության քաղաքականության ներդրմանը, որի հայեցակարգն արդեն իսկ հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Սա Հիմնադրամն իրականացնելու է՝ աջակցելով համապատասխան օրենսդրական դաշտի և իրատեսական գործողությունների ծրագրի մշակմանն ու ապահովելով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և բարձրակարգ փորձագիտական օժանդակություն: Նախատեսվում է առանձին ուշադրություն դարձնել մանկական պալիատիվ խնամքի զարգացման հեռանկարներին, իրականացնելով կարիքների և երկրում առկա հնարավորությունների գնահատում, որը հիմք կհանդիսանա իրատեսական ռազմավարության մշակման համար: Այս ամենը Հիմնադրամը կիրականացնի թե իր և թե գործընկերների փորձագիտական հնարավորությունները օգտագործելով: Հիմնադրամի այս ծրագիրը շարունակելու է օժանդակել Հայաստանի Հոգեկան առողջության քաղաքականության իրականացմանը՝ համաձայն ՀՀ Կառավարության կողմից ընդունված ռազմավարության, որն հիմնված է համայնքային խնամքի կենտրոնների սկզբունքի վրա և որոնց, թվով 2 մոդելների աջակցումը հնարավորություն կստեղծի դրանց հետագա ընդլայնման համար: Ծրագիրը նպաստելու է խոցելի և մարգինալացված խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը: Այս ծրագիրը նաև ստեղծելու է համապատասխան կրթական և մասնագիտական միջավայր՝ պալիատիվ խնամքի, հոգեկան առողջության, հանրային առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները զուգահեռ քննարկելու լայն հանրության համար: Հիմնադրամն իր այս ծրագրի միջոցով նպաստելու է առողջապահության ոլորտի արդյունավետ իրավական կարգավորման գործընթացներին: Ծրագիրը կիրականացվի ինչպես դրամաշնորհների տեսքով, այնպես էլ ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ քննարկումների, հետազոտական աշխատանքների, նաև պետական, հասարակական կազմակերպությունների և միջազգային ու տեղական համապատասխան փորձագետների ընդգրկմամբ:

Ար 15/11.9

Ար 15/11.9

| | |
|---|---|
| | [illegible]<br>- Հիմնադրամի Կրթություն ծրագիրը շարունակելու է լինել ջատագովը հայաստանյան բուհական համակարգի համապատասխանելիության եվրոպական չափանիշներին՝ օժանդակելով Բոլոնիայի շրջանակներում իրատեսական, մասնակցային և արդյունավետ բարեփոխումների իրականացմանը: Ծրագիրը, օգտագործելով թե Հիմնադրամի, թե հետաքրքրված ակադեմիական համայնքի, և թե միջազգային վարկանիշ ունեցող փորձագետների գիտելիքներն ու կարողությունները, նպաստելու է անկախ փորձագիտական գնահատումների և հետազոտությունների իրականացմանը, որոնք էլ խթան են հանդիսանալու առավել արդյունավետ և շոշափելի իրականացվող բարեփոխումներին:<br>- Ծրագիրը ստեղծելու է հնարավորություններ անկախ գնահատումների և մշտադիտարկումների համար, որոնք պետք է նպաստեն միջնակարգ կրթության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումներին, դրանք դարձնելով առավել թափանցիկ, դյուրին և արդյունավետ, ինչպես նաև բարձրացնելու են որակյալ դպրոցական կրթության մատչելիությունը՝ աջակցելով միջազգայնորեն ընդունված չափորոշիչների ներդրմանը մեր կրթական համակարգում՝ համածայն ստանձնած պարտավորությունների և մեծածավալ նախագծերի: Ծրագիրը կիրականացվի դրամաշնորհների տեսքով, որոնք կշնորհվեն և կազմակերպություններին, և տեղական ու միջազգային փորձագետներին, ինչպես նաև, որոշ նախաձեռնություններ կիրականացվեն ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պատրաստված առաջարկությունների ջատագովություն, շահագրգիռ լայն խմբերի համար քննարկումների կազմակերպում:<br><br>Իրավունք և քրեական արդարադատություն<br>- Ծրագիրն, օգտագործելով Հիմնադրամի և գործընկերների ներուժը, նպաստելու է մեր երկրում օրենքի գերակայության հաստատմանը, Հայաստանի կողմից արդարադատության ոլորտում ստանձնած բարեփոխումների թափանցիկ և իրատեսական իրականացմանը և դրանց մասին տեղեկատվությունը դարձնելու է մատչելի լայն հասարակության համար, աջակցելու է փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությանը, այնտեղի պայմանների բարելավմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև օժանդակելու է արդարադատության մատչելիության բարձրացմանը՝ աջակցելով փաստաբանական գործունեությանը, այն հասցնելով առավել բարձր որակի: Ծրագիրը, հենվելով տեղական և միջազգային փորձագիտական կարողությունների վրա, նպաստելու է Հայաստանում ընթացող քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներին՝ դրանք իրականացնելով միջազգային չափանիշներին համապատասխան, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքի դեմ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանը: «Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության նպատակին հասնելու համար կտրվեն դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատ մասնագետներին, ինչպես նաև կկատարվեն աշխատանքներ ուղղակիորեն ԲՀՀՕՀՀՄ-ի կողմից, այն է՝ կազմակերպել քննարկումներ, վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված կլինեն զարգացնելու տեղական մասնագետների հմտություններն ու կարողությունները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը<br>Ակնկալվում է հարկային արտոնությունների ստացում՝ ապրանքների, սարքավորումների, գրքերի և գրականության, ուսումնական նյութերի ներմուծման և ծեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱԱՀ-ից ազատում, |

Ա-15/11.9

| | |
|---|---|
| | հեռահաղորդակցման և կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության, հյուրանոցների և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում, տարեկան ֆինանսական աուդիտի ծախսերի ԱԱՀ-ից ազատում: |
| 3. | Բարեգործը<br>Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ջոնգի (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ)՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով: |
| 4. | Ծրագիրը կատարողը<br>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ<br>Գործող հասցե՝ Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758<br>Իրավաբանական հասցե՝ Արամի 44<br>ՀՎՀՀ՝ 02535097 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը<br>Ծրագիրն իր բոլոր ուղղություններով իրագործվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ներառյալ Երևանն ու հեռավոր մարզերը: Ծրագրերն իրականացվում են կրթության, առողջապահության և իրավա-հասարակական բնագավառներում: |
| 6. | Ծրագրի բյուջեն<br>ԲՀՀՕՀՀՄ-ի 2015 – 16թթ. ընդհանուր ծրագրի գումարը կազմում է 1,750,550 ԱՄՆ դոլար, որից ըստ ուղղությունների.<br>1. Քաղաքացիական հասարակություն — 800,000 ԱՄՆ դոլար (350,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 450,000 ԱՄՆ դոլար 2016թ.)<br>2. Հանրային առողջապահություն — 210,000 ԱՄՆ դոլար (120,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2014թ.)<br>3. Կրթություն — 360,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 160,000 ԱՄՆ դոլար 2016թ.)<br>4. Իրավունք և քրեական արդարադատություն — 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2016թ.)<br>5. Կազմակերպչական ծախսեր — 180,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 92,000 ԱՄՆ դոլար 2016թ.)<br>Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ջոնգի (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ) կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով՝ ծրագրի իրականացման ընթացքում (եռամսյակային կտրվածքով՝ միջինը մոտ 218,818 ԱՄՆ դոլար): |
| 7. | Բարեգործության ստացողը<br><br>«Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողները կլինեն ցանկում ընդգրկված կազմակերպություններից, որոնք կընտրվեն մրցույթների արդյունքում՝ համաձայն ԲՀՀՕՀՄ-ի 2014-17թթ. |

Ա-15/11.9

[illegible] մակարդակից հաստատվելու [illegible] անդամների խորհրդի և [illegible]ացային [illegible] խորհուրդների կողմից:

«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 01512224
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00826651
«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պուշկինի 96, ք. Գյումրի 3102, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05522266
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ
ՀՎՀՀ՝ 06926024
«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մաշտոցի պող. 15, բն. 131, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 00055317
«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Այգեստան 9-րդ փող., տ. 6, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 00063072
«Մանդատ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Թումանյան 24, բն. 33ա, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 02709141
«Հայաստանի հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պուշկինի 3ա, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 01215357
«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Հալաբյան 22բ., բն. 42, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 01229454
«Հանրային լրագրության ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սարյան 30, 2-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02597658
«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Շահումյան 68ա, ք. Արմավիր 0901, Արմավիրի մարզ
ՀՎՀՀ՝ 04417204
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պռոշյան 8, ք. Մարտունի 1402, Գեղարքունիքի մարզ
ՀՎՀՀ՝ 08410372
«Գորիսի մամուլի ակումբ» հասարակական կազմակեպություն
Գտնվելու վայրը՝ Անկախության 2, ք. Գորիս, Սյունիքի մարզ
ՀՎՀՀ՝ 09207456
««Խորանն Արդ» ինտելեկտուալ կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մ. Մկրտչյան 37ա/1, ք. Գյումրի, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05528262
«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02554073
«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Մ. Ավետիսյան 4-րդ փող., ք. Երևան 0069
ՀՎՀՀ՝ 00855742

2015-16թթ. ընթացքում իրականացվող ծրագրի ստացողներ են հանդիսանալու նաև մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող այլ հասարակական կազմակերպություններ և անհատներ: Նրանց ընտրությունը կկատարվի հետագայում՝ հայտարարվող բաց մրցույթների արդյունքում ներկայացրած հայտերի հիման վրա:

Մրցույթների չափանիշները միանման են ԲՀԻՕՀՀՄ-ի բոլոր ուղղությունների համար և ներկայացված են ստորև:

«Հանրային առողջապահություն» ուղղությունն իր մեջ ունի մի քանի ենթաուղղություններ: Ստորև ներկայացվում են դրամաշնորհի ստացողներն ըստ ենթաուղղությունների.

ա) «Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցում» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից է «Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Արշակունյաց պող. 2, 4-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00885303
Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև ԲՈՒՀերը, մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններն ու անհատները: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:

բ) «Ցավամոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագիր
Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի մշակված քաղաքականության իրականացմանը, որի հայեցակարգը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Ծրագրի աջակցումը ներառում է՝ համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծում, ինչպես նաև այդ ոլորտի խնդիրների շուրջ բարձրակարգ տեղական և միջազգային մասնագետների մասնակցությամբ պարբերական քննարկումների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև աջակցել պալիատիվ

[illegible]
Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության, Գլոբալ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և այլ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը կիրականացվի նաև ինչպես ուղղակիորեն Հիմնադրամի, այնպես էլ պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:
**«Ցավամոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից են՝**
«Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից:
Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 85, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02571251
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01503448
Երևանի պետական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928
Ծրագրի ստացողներ են նաև մարդու իրավունքներով և խոցելի խմբերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր:

գ) «Հոգեկան առողջություն» ծրագիր
2015-16թթ. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության իրականացմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև համապատասխան մասնագետների պատրաստմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ խորհրդակցությամբ և համագործակցությամբ:
Այս աշխատանքները կիրականացվեն տեղական և միջազգային համապատասխան փորձագետների ընդգրկմամբ և կհամակարգվեն Հիմնադրամի կողմից: Տեղական մասնագետները կներկայացնեն ՀՀ Սոցապ, Առողջապահության և Կրթության և գիտության նախարարությունները, ԵՊՀ, ԵՊԲՀ և այլ մասնագիտական կառույցներ:
«Հոգեկան առողջություն» ծրագրի դրամաշնորհի ստացողներից են՝
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01503448
Երևանի պետական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928
«Հոգեկան առողջություն» ծրագրի ստացողներ են նաև մարդու իրավունքներով և խոցելի խմբերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում

Ա-15/11.9

գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր, անհատներ:

«Կրթություն» ծրագիր
2015-16թթ. ծրագիրը նախատեսում է իրականացնել կրթության ոլորտին առնչվող խնդիրների և ընթացող բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց արդյունքների քննարկումներ հետաքրքրված անձանց և կառույցների մասնակցությամբ: Հետազոտությունների և ուսումնասիրությունների շահառուներից են հանդիսանալու կրթության ոլորտով հետաքրքրված անհատները, ակադեմիական համայնքի ներկայացուցիչները, բուհերը, դպրոցները, միջազգային կազմակերպությունները:

2015-16թթ ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող կազմակերպությունների, բուհերի, դպրոցների և անհատ հետազոտողների ընտրությունը կատարվելու է Հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթների շրջանակներում ներկայացված ծրագրերի հիման վրա և հաստատվելու է տեղական Տնօրենների խորհրդի և Կրթության աջակցման ցանցային ծրագրի Խորհրդի կողմից:

«Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողներն են՝
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00826651
«Մեր իրավունքների սահմանները» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ Ոստիկանության համակարգի Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Նոր Արեշ 79 – 11, ք. Երևան 0041
ՀՎՀՀ՝ 60454587

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է կազմակերպությունների կողմից ներկայացրած ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Մարդու իրավունքների և դրամաշնորհների ղեկավարման ծրագրի, նստավայրը Բուդապեշտ, խորհրդի կողմից:
